

“Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :

Rédaction du “Droschak”

GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

Ե Գ Ի Պ Տ Ա Ց Ի

(ԱՐՏԱՇԵՍ ՄԻՍԱԿԵԱՆ)

20/1 յունիս 97

ՀԵՌԱԳԻՐ (Սօֆիայի գիծ)

Կ. Պոլիս 5/17 յունիս 1897

Մեզան Երկրորդ թանկագին ընկերը եւ հայրենասէրը: Դառնալէս կարտասուներ եւ կ'երդնունք երթալ իր շաւիղով, իր մեծ իղէալներն իրազործելու:

Դաշնակցութիւնը իր ամենէն գործօն, ամենէն անձնէր, ամենէն ազնիւ եւ ամենուն սիրելի ընկերներէն մէկն ալ կորսնցուց: Երկար ու ցաւագին հիւանդութիւն մը յունիս 1-ին վերջ տւաւ Եգիպտացիի փոթորկալից կեանքին՝ Աղեքսանդրի մէջ:

Արցունքները, որոնք կը թափէին սիրելիներու գերեզմանի վրան՝ շատ քիչ են, ընկեր, քու անշուք շիրմիդ ոռոգելու: Հեռու արցունքը . . . որ դուն չսիրեցիր: Քու յիշատակդ, միշտ կենդանի, ընկերներուդ միութեամբ ինն ու խրախոյսը պիտի ըլլայ, եւ անոնց գործերը քու փառքդ պիտի յաւերժացնեն:

ԱՐՏԱՇԵՍ ՄԻՍԱԿԵԱՆ

(1875—1896)

Ո՞վ է այդ երիտասարդը, որ թէեւ ոչ այնքան ծանօթ ինքն ալ կը բաժնէ սակայն, դափնիի այն անսահման պսակը, լոյսի այն լայն ալիքը, որ կը զարդարէ Բարկէնի, Գնունիի եւ Սուրէնի խորիւստ ճակատները ու կը յաւերժացնէ իրենց իգէականացած հերոսի անուշ դէմքերը:

Սուրէնին եւ Գնունիին հետ Միսակեանը Սահմանիոյ յեղափոխական Երրորդութիւնը կազմեց:

Սամաթիացիներու զաւակ—թէ եւ Պէօյիւքտէրէ ծնած—բայց Սահմանիոյ մէջ անցուց իր պատանեկութիւնը եւ իր կրթութիւնն առաւ վաղեմի յիշատակներով փառաւոր Սանուց Վարժարանին մէջ:

Իր ընկերները դեռ կը յիշեն այդ խանդավառ պատանին, որ տեսակ մը պաշտում ունէր հայ ուսումնեւորու համար:

Հին յիշատակները, անցեալը իր մէջ չինեցին վերացական երազուն հայրենասիրութիւն մը, որ աւելի զրական, աւելի ամուր հիմնուէ վրայ պիտի կենար դէպքերու եւ իրողութիւններու ազդեցութիւնով, ու զինքը պիտի տանէր մինչեւ անձնագործութիւն:


Դեռ դպրոցական սեղանին վրայ բախտն իր դէմն հանեց Գնունին, որուն յեղափոխական թունդ հաւատքը, խանդավառ խօսքերը առաջին օրէն զիւթեցին Միսակեանը: Ի՞նչ հրճանքով, սկսնակի երկիւղածութիւնով, սրտի տրու փիւռներով կը կարդայ Միսակեանը այն յեղափոխական գրքոյկներն ու թերթերը, որ Գնունին կը բերէր կուտար իրեն:

Իր դպրոցական շրջանը աւարտելու մօտ՝ Դաշնակցութիւնը արդէն զարկած էր իր վրանը Պոլսի մէջ եւ Միսակեան Գնունիին միջոցաւ կը մտնէր անոր դրօշին ներքեւ:

Հազիւ շրջանաւարտ ազատ տղա եւ իր հոգիին թռիչներուն հետեւելու, վարժապետութիւնը հասնելուն, իր դպրոցի կեանքը շարունակելու, թերեւս իր գաղափարակիցներէն չգատուելու եւ աւելի իր զգացածը ուրիշներուն ալ հաղորդելու իրաւունքը եւ հաճոյքը վաճելու համար:

Որքան նեղ թւեցաւ, սակայն, այդ կեանքը այդ հազիւ քսանամեայ երիտասարդին. բուն գործունէութիւն մը, անսահման ծրագրեր, ո՛ւր պիտի կրնային սեղմիլ կամ հաշուիլ իրնոր սկսած կեանքին:

հետ, ուր ձեռնհասութիւն, երկաթի կամք, սառն դատողութիւն միայն կրնային հեռաւոր յաջողութիւն մը երաշխաւորել իրեն:



ԱՐՏԱՇԵՍ ՄԻՍԱԿԵԱՆ

Լայն գործունեությունն ծարավի կը խորհի վեղարին միությունն տակ գործել ինչ որ իրեն աշխարհական չպիտի կրնար ընել. կը մտածէր ուղղակի խօսիլ ժողովուրդին՝ եկեղեցիի բնական բարձունքէն, ուրիշ եկող խօսքերը այնքան ազդեցիկ են, ու այնքան տպաւորիչ:

Ու օր մը Արմաշի ճամբան ձեռք կ'առնէ Դպրեվանքը մանկու եւ վարդապետ ձեռնադրելու համար: Բայց քիչ ետքը աչքերուն վրայէն քողը վար կ'իյնայ. կը տեսնէ թէ այդ վանքի միջոցաւ մէջ իր յեղափոխականի զգացումները փոխանակ սրելու եւ անոնց մէջ ուժով ջիւղեր հիւսւելու, աւելի կը ժանգոտին, աւելի կը թուլան մոտոքական երազներու մէջ:

Չէ, ինքը երազներու հետ գործ չունէր. ժողովուրդին վէրքերը կային արեւնոտ, բարաստուն ու տաք, որոնց վրայէն հարկ էր գուծի ու օգնությունն ձեռք մը անցնել: Անդին ժողովուրդ մը կար, ընդունակ, կեանքի ու յառաջագիմունքի հիւսիսով ակադէմուն, որ նախնական ընդհանրով միայն մղող ամբոխի մը ոճրագործ քմահաճոյքներուն, ու կամայականութեան տակ կ'այլասեցէր: Ու վանքին միջութիւններուն մէջ երազեց զէնքերն, ու յեղափոխական կարօտը զգաց այնչափ ուժով, որ առտու մը նորէն նոյն ճամբով լռիկ մնջիկ հա դարձաւ, Սամաթիա, իր ընկերներուն քով:

Իր ուղղութիւնը վերջնապէս գտած՝ Սուրենի ու Գնունիի շնորհիւ իր հաւատքին մէջ զօրացած՝ կրակի գործի. իբր սամաթիացի, շատ մօտէն ճանչնալով իր թաղին երիտասարդութիւնը, անոնց լաւագոյններուն կը մօտենայ յեղափոխական գաղափարը տարածելու:

Խումբեր կը կազմէ ու կը վարէ, «Դրօշակի» ընկերացումին չըջանալը կ'ընդլայնէ հետզհետէ:

Երկրորդական դերերու մէջ իր կատարելալ յաջողութիւնը, իր գործունեությունն եռանդաւ ու անձնէր բնաւորութիւնը, մօտ էին զինքը աւելի կարեւոր դերերու առաջնորդելու՝ երբ դէպք մը այդ բանին արդեւ կ'ըլլայ ու իր աւելի լայն գործունեությունն առջեւ առժամայ վերջակէտ մը կը դնէ:

Աչքեկանի օրով մեռած Սահմանադրութիւնը, Իզմիրեանի, այդ ԵՐԿԱԹ պատրիարքին միջոցով յարութիւն առած է: 95-ի տարեդարձը պիտի տօնէի Ազգ. Հիւանդանոցի պարտէզին մէջ:

Կատարած երգերը, կատարած ճառերուն կը յաջորդեն ու Հիւանդանոցին ճակատը ծածանող թիւրք դրօշակը վար առնելու եւ բղիկ բղիկ ընելու փորձեր կ'ըլլան:

Յանկարծ մէկը կը բարձրանայ ժողովուրդին մէջ, իր յորդող յուզումը հազիւ զսպելով:

Երիտասարդ մըն է ձուլածն. սիրուն դէմքով, որուն առնականութիւն կուտայ սրածայր մօրուք մը: Բաղմունքիւնը կը հաւաքէ, կը խտանայ շուրջը եւ հեւիհեւ կ'ունկնդրէ բանախօսին, որ այդ գլուխներու համբ ու համաչափ ալեծփումին առջեւ ու իր վրայ սեւեռած նայածքներէն խեղճորոյս՝ Սասունի կատարածը կը նկարագրէ կրակէ բաւերով, յեղափոխական անխուսափելի պէտքը կը չեչտէ, յիշի մը կ'ընէ ուժգին եւ զինիւ կը յորդորէ:

Ծափահարութեան ու կեցցէնիւն փոթորիկի մէջ կ'աւարտի խօսքը:

Լրտեսներու ուշադրութենէն չի վրիպիր սակայն ճառախօսը, որ Միսակեանն էր: Եւ կը հետապնդեն զինքը:

Բայց, ժողովուրդը իր շատ խորաթափանց ընդգնելով կը նախազգայ վտանգը ու կը յաջողի զինքը փախցնել ու հետքը կորսնցնել:

Դաշնակցութիւնը դէպքին հետեւեալ օրը կ'իմանայ եղբւրները: Միսակեանն բան մը չէր ըսած առաջւերէն ընկերներուն իր ճառի մասին:

Միսակեանի այդ անփորձ քայլը վայրկեանի ոգեւորութեան ծնունդ՝ յեղափոխական գործիչի մը աննկելի, որ կրնար իր ձեռքակալումովը շատ տխուր հետեւութիւններու ծնունդ տալ, վստահութեան նւագում մը յառաջ կը բերէ ընկերներուն մէջ, իր նկատմամբ: Եւ Կեդր. Կոմիտէն կը թուղու զինքը իր երկրորդական դերին մէջ՝ սպասելով որ աւելի խոհեմ դառնայ ու աւելի գործադրող ընկերական կարգապահութեան: Այդ միջոցին Սամաթիոյ մէջ պաշտօն չգտնելով՝ Իզմիր կ'ուղեւորուի, ուրիշ նորէն Սամաթիա կը դառնայ, իր բոյնը, եւ ընկերներուն կրակի աշակցիլ լրջօրէն: Անոնք, մասնաւորապէս Սուրեն, շօշափելի փոփոխութիւն մը կը գտնեն իր վրան: Իր ճամբորդութիւնը, ուրիշ, նոր մարդերուն հետ չփոխմը, զինքը աւելի լրջացուցած, աւելի չըջահալեաց ըրած էին:

Այդ ատեններն էր, որ կը կազմէր Սամաթիոյ ենթակօմիտէն: Միսակեան՝ Սուրենին առաջարկութեամբ անգամ կ'ընտրուի ենթակօմիտէն մէջ շուտով կարեւոր դիրք մը կը բռնէ: Խումբերու վարումը, թաքստոցներ ձարելը եւ զէնքերու փոխադրութիւնը հիմա իր գլխաւոր զբաղումները կ'ըլլան: Իր բաժինն ունեցաւ նաեւ Սամաթիոյ պաշտպանութեան յատկազօրը պատրաստելու գործին մէջ, որուն հոգով՝ սրտով փարեցաւ:

Օգոստոս 14-ի օրերը կը մօտենան. սհազին պատրաստութիւններ կը տեսնին Սամաթիան, մասնաւորապէս, անդու ու անգաղղում գործունեությունն մէջ է: Մեր հիանալի ողաքը ռուսի ծրարները ձեռնարկին, անփոյթ, կ'անցնին ու կը դառնան, գիշերը: Միսակեան ջղուտ գործունեություն մը ցոյց կուտայ այդ միջոցին:

Օգոստոս 14-ը կուգայ վերջապէս. ընկերներն իր տունը, որ արդէն ժողովատեղի եւ գլխաւոր թաքստոցներէն մէկն էր, հաւաքւած են վերջին խորհուրդն ընելու: Միսակեան տկարացած չէ երբեք, կարճւածէն աւելի պաղարիւն ու հաստատակամ կը ցուցնէ ինքզինքը:

Անակնկալ մատնութիւնով մը առտուն Գնունիի տունը կը պաշարուի, ու Գնունիի տան հետ Միսակեանի տունն ալ ներսն են իրենք, այդ երեք մեծ անձնագոհները, որոնց հետ միացած է ուրիշ հիանալի երիտասարդ մըն ալ, Հայկ Արապեան: Որոշւած յատկազօրը կը մնայ անիրադրոյթի. զինուորական շղթան կը բանտէ գրեթե տան մէջ: Կատարած առիւծներու պէս, որ վանդակի մը մէջ բանտարկւած են, այդ չորս կտրիճները բարկութենէն ինքզինքնին կ'ուտեն, որ չպիտի կրնան իրենց ծրագիրը կէտ առ կէտ գործադրել:

Տղոց անձնատուր չըլլալով՝ շղթան հետզհետէ կը թանձրանայ ու կ'ամրապնդուի:

. . . Ժամը 6-ն է, հարսնիքին հետ հրախաղութիւնները կը սկսին: Ռումբերը Գնունիէն, Սուրենէն, Միսակեանէն ու Արապեանէն նետւած՝ զինուորները շանտառակ կը փռեն, թիւրք ամբոխը լեղապատառ կը փախցնեն ու արձագանքը որոտուններուն կերթայ, Կեդրոնական Բանտին վրայէն թռչելով, Ոսկեղջիւրը կտրելով, կերթայ, շատ հեռուններէն լսող փոթորիկի մը խուլ ու ահաւոր պայթումին պէս, խառնիլ Պանքի եղբայր ռումբերու որոտքին, ու անոնց հետ բանալու նոր շրջան մը յեղափոխական պատմութեան մէջ:

Առասպել մը ինքնին կը թւի հիմա 18 երկար ժամերու այդ կտրու, եւ կուղները հնութեան փոշիներէն դուրս պրծնող զիւցաղներ:

Հերոս մը ինքը՝ Միսակեանն ալ, որ սպարտական պալարիւնով, վերջին «մնաք բարովն» ալ կը զլանայ իր հօրը, մօրը, քոյրերուն, չի բաժնւիր իր ընկերներէն եւ մահաւան համբոյրներուն մէջ կը նստակէն այդ չորս քաջերը մեծ ուխտ մը՝

Կեանքին ու կեանքին համար մահաւան ալ ուխտը:

ԿՐԵՏԷԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Կրետական խնդիրը նորից սկսում է տեղ բռնել դիւանագէտների սեղանի վրայ:

Ճիշտ է, որ Կրետէն վերջնապէս ազատւել է սուլթանի աւագակ կառավարութեան ճանկերից. նրա իշխանութիւնը կը մնայ միայն անւանական, բայց դեռ մնում է վերջին գծաւոր հարցը՝ երկրի կառավարութեան ձևը: Կրետացի ապստամբները դեռ ևս յամառում են իրենց առաջնայ պահանջի վրայ, հրաժարւում են միանգամից ընդունել Եւրոպայի առաջարկութիւնը. բայց պարզ է, որ պետութիւնները ըմբոստ կրետացիների ականջից քարշ տալով, նրանց վիզն են անցկացնելու վերջ ի վերջոյ եւրոպական լուծը:

Լրագիրների հաղորդելով, պետութիւնները ընդունել են վերջնապէս Ֆրանսիայի առաջարկութիւնները՝ Կրետական խնդրի լուծման մասին: Մնում է միայն եւրոպացի կառավարչի ընտրութեան հարցը: Յայտնի է նոյնպէս, որ Ֆրանսիայի կողմից այդ պաշտօնի համար առաջարկութիւն է եղել Զւիցերական Դաշնակցութեան նախկին նախագահ՝ Նուվա Դրօյին: Վերջինս, որ, հրաւիրւած Պարիզ, մերժել էր սկզբում կառավարչի ծանր պաշտօնը, դեռ ևս վերջնական պատասխան չի տւել Ֆրանսիայի նոր առաջարկութեան՝ գոնէ առժամապէս ուղեորւել Կրետէ ու նրա քաղաքական կազմակերպութեան հիմքը դնել:

Աչքի ընկնող հանգամանքը այն է, որ այս անգամ կառավարչի պաշտօնի համար դիմում է լինում ոչ թէ գերմանական մանր պետութիւններին, որոնց վրայ էր ընկած թագաժառանգների համար՝ թէև շնորհքով հարսնացուներ, բայց նոր ազատւած երկիրների համար՝ անշնորհք կառավարիչներ հայթայթելու մենաշնորհը, այլ մի չէզոք ազգի հասարակ անդամին, որը մի ժամանակ նախագահի պաշտօն էր վարում:

Այս ընտրութիւնը արդեօք թշնամութիւն է Ֆրանսիայի կողմից դէպի Գերմանիան, թէ վեց. մեծ պետութիւնները յատուկ նպատակներ ունին դրա վերաբերեալ, միևնոյն է մեզ համար: Մեր տեսակէտից նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ Նուվա Դրօն, իբրև զւիցերական Դաշնակցութեան նախկին նախագահ, կաշխատի, բնականաբար, Կրետէի քաղաքական դրութիւնը դնել նոյն հողի վրայ, որի վրայ կանգնած է այսօր իր հայրենիքը:

Կրետէի մէջ խաղաղութիւն հաստատելու պայմանները հասկանալու համար, արժէ մի ընդհանուր հայեացք ձգել եւրոպական զանազան պետութիւնների ընթացքի վրայ, որ նրանք բռնել են իրենց հպատակ տարբեր ազգութիւնների նկատմամբ:

Ի՞նչն է պատճառը, որ մինչդեռ Զւիցերական ազգկազմող գերմանացին, Ֆրանսացին, իտալացին մոռացել են իսպառ իրենց ծագումը. մինչդեռ Միացեալ-Նահանգների հպատակները ոչ անգլիացի են, ոչ Ֆրանսացի, ոչ իտալացի, ոչ գերմանացի, այլ պարզապէս քաղաքացի. մինչդեռ անգլիահպատակ բազմութիւն, բազմալեզու ազգութիւնները, աշխարհիս չորս ծայրը ցրւած, կուլտուրական բոլոր աստիճանների վրայ կանգնած, այսօր լուռ տանում են անգլիական տիրապետութիւնը (բացի, ի հարկէ, Իռլանդայից, որի դիրքը բացառիկ է), չնայելով որ անգլիացիք սրով ու կրակով են հաստատել իրենց իշխանութիւնը: Ի՞նչն է պատճառը, որ, ընդհակառակը, Ռուսաստանի, Աւստրիայի մեծ և փոքր ազգութիւնների կողմից անդուլ բողոքներ են լսւում. ինչո՞ւ այդ երկիրներում մշտապէս վառ է մնում ազգային թշնամութեան խնդիրը: Պատճառը շատ պարզ է: Աւստրիայում գերիշխող գերմանական տարրը իր զաւորելի կեղծ հայրենասիրութեամբ ձգտում է ճնշել միւսներին և գերիշխող դեր խաղալ միշտ: Ռուսական բռնակալութիւնը, թաթար բարձրացրած իր հպատակ բազմազան ազգերի գլխին, ստիպում է նրանց բոլորին՝ Սիբիրից սկսած մինչև Լեհաստան, Պետերբուրգից՝ Կովկաս, Լապլանդայից՝ Ուկրայինա, Օստգէյից՝ Թուրքաստան մոռանալ իրենց սովորութիւնները, աւանդութիւնները, օրէնքները, իրենց լեզուն, մտածել միատեսակ, ապրել այն օրէնքներով, որոնք ամփոփւած են արդարութեան մարմնացում՝ հռչակւած «Сводъ Законовъ» (Օրէնքների ժողովածու) գրքի մէջ, ղեկավարւել այն բարոյական սկզբունքներով, որ մշակւած են ժանդարմների ու ոստիկանների սրբազան խորհրդարաններում:

Իսկ եթէ Անգլիայում, Ամերիկայում, Զւիցերիայում մենք հանդիսատես չենք լինում ազգութիւնների ընդհարումներին, դրա պատճառը այն ընդարձակ քաղաքական արտօնութիւններն են, որ վայելում են բոլոր քաղաքացիները, այն տեղական լայն ինքնավարութիւնն է, որով ամենից շատ օժտւած է Զւիցերիան, ուր ինքնուրոյն են ոչ միայն Դաշնակցութիւնը կազմող կանտոնները, այլ և կանտոնների քաղաքները, գիւղերը, թաղերը և ուր ընտրւած Կեդրոնական իշխանութիւնը խաղում է շատ սահմանափակ դեր:

Բայց պէտք է ինկատ առնել, որ Կրետէի կռիւը պարլամենտական, ընտրողական պայքար չէ, ինչպէս դա տեղի է ունենում Աւստրիայում. բռնակալութեան ճնշում չէ այլևս, մի խումբ կեղտոտների արշաւանք չէ, ինչպէս Ռուսաստանում: Այնտեղ, արիւնաներկ աւերակների վրայ, դէմ առ դէմ կանգնած են երկու

ազգութիւններ, ոտից ցզլուխ զինւած, սպասելով յարմար առիթի՝ նորից յարձակելու իրար վրայ և մէկ մէկի արիւնը խմելու: Եւ եթէ Աւստրիայի, Ռուսաստանի նման քաղաքակիրթ կոչւած երկիրներին անհրաժեշտ է տեղական ընդարձակ ինքնավարութիւնը, ապա որքան դա բաղձալի է Կրետէի համար, ուր յոյները պատրաստուում են դարերի ընթացքում քաշկրտած ստրկութեան շղթաների վրէժը լուծելու, ուր տաճիկ ազգաբնակչութիւնը, որ վաղեմի արտօնութիւնների փշոտներից կպչելով, խայտառակ գործիք էր դարձել սուլթանների ձեռքում, — այժմ կորցրած տեսնելով իր մեծ երեւակայած արտօնութիւնները, կատաղի ընդդիմադրութեան է ձեռնարկում յոյների դէմ:

Կրետական գործերի ներկայ ծանր պայմաններում միակ միջնորդականը՝ Նումա Գրոյի Կրետէի ընդհանուր կառավարչի պաշտօնն ստանձնելը կը լինի:

Երկու ազգերի լարւած դրութիւնը թուլացնելու և հետզհետէ իսպառ ոչնչացնելու համար, հարկաւոր է ոչ միայն արտաքին, չէզոք ուժ, այլ և անհրաժեշտ է մտցնել որքան կարելի է ընդարձակ համայնական, շրջանական (ռայօնական) ինքնավարութիւն և սրանցից կազմւած դաշնակցութիւն: Ամէն մի ռայօն, որ համացեղ ազգաբնակչութիւն է կազմում — թող ունենայ իր սեփական կարգերը՝ իր մտաւոր ու բարոյական զարգացման համեմատ: Մտաւոր զարգացման պահանջները շատ տարբեր են — թող իւրաքանչիւր իր կարիքների համաձայն իր ուժերով տանի դպրոցական կամ առհասարակ մտաւոր ընդհանուր զարգացման գործը: Բարոյական հասկացողութիւնները, դատարանական կարգերը իրար հակառակ են — թող իւրաքանչիւր ունենայ իր նեփական դատարանը: Արդիւնագործութեան զարգացումը առաջ լսելու համար, թող իւրաքանչիւր ռայօն առանձին, կամ հարեանների հետ համաձայնելով, շինեն ճանապարհներ, ստեղծեն այլ դիւրութիւններ և այլն... Կեդրոնական կառավարութեան միջամտութիւնը այս տեսակ գործերի մէջ անպատճառ դժգոհութիւն կը յարուցանի երկրի այս կամ այն մասի մէջ: Նրան կը մնայ առայժմ՝ զբաղւել այն ընդհարումներով, որ կարող են տեղի ունենալ զանազան շրջանների կամ սրանց պատկանող անհատների մէջ:

Սրանով միայն հնարաւոր է նւազեցնել յոյների ու տաճիկների թշնամական ընդհարումները, սրանով միայն կարելի է հաշտութիւն առաջ բերել դարերով իրար արիւն խմող երկու բանակների մէջ, պարզել այն համերաշխութիւնը, որ կայ ընդհանրապէս աշխատաւոր ժողովուրդների մէջ: սրանով միայն կրետացիները, աւելորդ կը գտնեն սուրը, հրացանը և մշտական պատերազմի դաշտ ներկայացնող կղզին կը դարձնեն վերջապէս ա չ խ ա տ ա ն ք ի դաշտ:

*
* *

Հեռագրական վերջին բուրերին նայելով, Նումա Գրոն

կը համաձայնի Կրետէի մէջ կառավարութիւն հաստատելու գործն իր ձեռքն առնել միայն այն պայմանով, որ պետութիւնները թող տան իրեն մտցնել այնտեղ դաշնակցական կազմակերպութիւն:

Կը համաձայնեն արդեօք պետութիւնները Գրոյի պահանջին, թէ պառաւ խնամակալների գծում հաշիւներով աւելի կը խանգարեն Կրետէի խաղաղացման գործը, այդ կը տեսնենք մօտիկ ապագայում:

Ն Ա Մ Ա Կ Ա Ֆ Ի Ո Ն - Գ Ա Ր Ա Յ Ի Ս Ա Ր Ի Ց

8/20 մայիս 97

Մեր քաղաքը եօթը հազար տունէ բաղկացած կառավարչութիւն մըն է, որուն հազար տունը միայն հայ է, իսկ մնացած վեցհազարը ամբողջ թիւրք. մէկ երկու ալ պանդուխտ յոյն ընտանիք կայ: Գալով շրջականերուն՝ թէ գիւղերը և թէ գիւղաքաղաքները ամբողջովին թրքարնակ են. և ոչ մէկ հայու գիւղ կայ:

Մեր թիւրքերը իրենց մոլեռանդութիւնով ու բարբարոսութիւնով կրնան մրցիլ ուրիշ ամէն տեղի թիւրքերու հետ. նախատինք, հայհոյանք, սպառնալիք միշտ կը տեղան հայերու գլխին: Կառավարութիւնն ալ միշտ կը պաշտպանէ անոնք և երբ առաջնորդական տեղապահի փոխանորդը կը բողոքէ խուժանին վայրենի արարքներուն դէմ, միւթէսարիֆը, որ Համիտին ամենահաւատարիմ շուներէն մէկն է, ամենեւին ականջ զննել չ'ուզեր և յիշ պատւիրենք, չեն ըներ՝ պատասխանը տալով կը ճամբէ բողոքողը: Ինքը քաղաքին ապահովութեան երեք ուշ չի դնէր, այս մասին քանիցս պաշտօնապէս ծանուցագիր (թագրիր) գրւեցաւ Թաղ. Խորհուրդի կողմէ, բայց իզուր. մինչև հիմա արդիւնք մը չ'ունենալէ զատ, անկարգութիւնները կը շարունակւին: Այս անգամ նորէն վատութիւն մը մտածեց, որ պէսզի իր հնարած չարութեան շնորհիւ իրեն եղած արգարացի բողոքներուն ձայնը խեղդէ: Զատկէն առաջ Պատրիարքարանէն, ինչպէս ամէն գաւառներ, նոյնպէս ալ հոս, շրջաբերական եկած էր, կարօտեալներու համար դրամ հանգանակելու: Այս շրջաբերականի հիման վրայ սկսան հանգանակել. մինչև այսօր 500 ոսկի եղաւ և այս դրամէն գանձւած 300 ոսկին Զատկէն ետքը խրկեցին Պատրիարքարան և մնացածն ալ գանձելով պիտի խրկէին: Միւթէսարէֆը չգիտնալ ձեացնելով շատոնց ի վեր Պատրիարքարանի կողմէ ձեռնարկւած և ամէն կողմ շրջաբերականներով հաղորդւած այս հրահանգը, թւականէս երեք օր առաջ պաշտօնագրով մը կը հարցնէ Թաղ. Խորհուրդին. յիշեցի որ ժողովուրդէն դրամ կը հաւաքէք եղբւր. որոնք հրամանով, և ի՞նչ նպատակով, և գանձւածը որքա՞ն է, դարեցուցէք հանգանակութիւնը, գանձւած դրամը պահեցէք, և պէտք եղածը հաղորդեցէք կառավարութեան: Զմոռնամ ըսելու, թէ միւթէսարէֆէն եկած այս պաշտօնական գրութիւնը մայիս 1 թւակիր էր, բայց մայիս 3-ին կը արւի Թաղ. Խորհուրդին, որովհետև սա մայիս 3-ին դարձեալ բողոք տւած էր կառավարութեան, շարունակւող անկարգութիւններուն համար: Միւթէ-

սարիֆը դիտմամբ մայիս 1 թվականը կը դնէ իր գրութեան վրայ, որպէսզի պատասխանատու բռնէ Թաղ-Խորհուրդը, թէ ինչո՞ւ երեք օրէ ի վեր պատասխան տւած չեն իրեն: Թաղ-Խորհուրդը ծանուցագրով մը կը պատասխանէ թէ՝ Պատրիարքարանի պաշտօնական հրամանով Զատիկէն առաջ սկսան ինպատկար տեսներուն դրամ հաւաքել, թէ այս բանը հանգանակութիւն չէ այլ աղքատներու և որբերու համար Զատիկէն տօնի առթիւ ողորմութիւն է. մինչև հիմա հասոյթը 500 ոսկի եղած է և ասկէ գանձւած 300 ոսկին անցեալները խրկւած է Պատրիարքարան և մընացածն ալ հաւաքելու վրայ են: Իսկոյն այս մասին պաշտօնապէս բողոքեցին Պրուսայի կուսակալին և Պատրիարքարան:

Վերջին ժամանակներս ապահովութիւնը բոլորովին վերցած է. գիւղերը առուտուրի գնացող հայերը, որ ստիպւած են տաճկական թաղերէ անցնել, կը քարկոծւին ու կը ծեծւին: Այս տեսակ դէպքեր այն աստիճան շատցան, որ մեր «մեծ աղաները» իրենց թըմբութենէն սթափելով՝ վերջերս պաշտօնապէս բողոքեցին միւթէսարիֆին, բայց արդիւնք մը չունեցաւ և բողոքի ներկայացումէն երեք-չորս օր ետքը նորէն՝ իրենց այգիներէն վերադարձող քանի մը հայեր քարկոծեցան ու մէկուն ալ աչքերը հանեցին թիւրքերը:

Նամակս գրած միջոցին նոր լուր մը առի. հայուն մէկը գիւղէն վերադարձած պահուն՝ ճամբան քանի մը թիւրք աւազակներ զինքը կը վերաւորեն և կը կողոպտեն. այժմ վերաւորեալը իրեն տունը պառկած է եղբր. մանրամասնութիւններ կը պակսին:

Ցածկի փողոց բնակող հայու մը պզտիկ աղջկան, իրեն դրացի թիւրք կինը թոյնով թաթխած շաքար կուտայ. պզտիկ աղջիկը չգիտնալով՝ կ'առնէ մօրը կը բերէ և կը պատմէ, թէ դրացի թիւրք կինէն առած է: Մայրը կը տեսնէ, որ շաքարը տարբեր գոյն մը ունի, կը հասկնայ թէ թոյն կայ և կ'երթայ դրացի թիւրք կնոջ կը հարցնէ պատճառը: Թիւրք կինը համարձակ կը պատասխանէ. «Պիզ օնու սօգաղա աթտըք, չօճուշա վէրմէտիք» (մենք ան փողոց նետեցինք, աղջկան չաւինք): Խեղճ հայ ընտանիքը վախէն կըստիպւի ուրիշ փողոց փոխադրել իր տունը: Քանի որ այս միւթէսարիֆը հոս է, կոտորածի երկիւղ կայ միշտ. նպատակը պարզ է. կ'ուզէ անթի փորը կշտացնել, վերջին ծայր կաշառակեր, ստոր բնութեամբ արարած մը. շուկայի հայ խանութպաններէն ապրանք կ'առնէ, դրամը չի տար. հայը եթէ յանդգնի առնելիքը պահանջել՝ իսկոյն կը վռնտէ. «Պարտք չունիմ, կորսւե՛լ»:

Յունական պատերազմին պատճառով մեր քաղաքը զինւորական շարժումներու կեդրոն եղած է. հեռաւոր անկիւններէ ըկած զինւորներ երկաթուղիով Իգմու կը խրկւին: Հաւաքւած զինւորները միացած տեղական խուժանին և քաջալերւած տեղական կառավարութենէն՝ իրենց սովորական բարբարոսութիւնները կ'ընեն: Մէկ քանի օր առաջ գիշեր մը քանի մը զինւոր հայու մը դուռը կը զարնեն. տունէն հասկնալով թէ զօրք է, չեն բանար. թիւրքերը բռնի կը մըտնան, տանաէրը հոն չգտնալով՝ կ'ուզեն տանտիկնոջ պատիւը բռնաբարել. կինը օգնութիւն կը պոռայ և հանած աղմուկէն դրացիները դուռս կը թափին: Զինւորներէն մէկը ռէվոլվերով վեց կրակ կ'ընէ վախճը-

նելու համար, բայց գնդակները և ոչ մէկու վնաս կը հասցնեն: Նոյն միջոցին հայուն մէկը փոխադարձաբար կրակ ընելով՝ զինւորները օտար զէնքի ձայնէն սարսափած՝ կը փախչին ու խեղճ կինը կ'ազատի: Առավարութիւնը կ'իմանայ, բայց մտքէն չ'անցընէր բան մը ընել:

Ինչպէս ամէն տեղ, հոս ալ կառավարական պաշտօնեաները բանակին պէտք եղած ձիերը ժողովուրդէն գնեցին, առանց դրամ վճարելու, ըլլայ հայ, ըլլայ թիւրք: Ո՞վ կրնայ բողոքել և որո՞ւ բողոքել: Զինւորներուն խեղճութիւնը կատարեալ է. հեռու տեղերէ գալով, ոտքերին ուռած, շատեր հիւնդցած և քանիներ ալ ճամբան մեռած են: Բայց այս կոյր մոլեռանդները բողոքել չեն գիտեր, միշտ իրենց վիզը կը ծռեն ու թէև շան պէս քաղցած՝ աղօթք կը կարդան իրենց մէկ հատիկ աւազակապետ Համիտին համար: Զօրքին մէկ մասը, չնայելով իր խեղճութեան, հրամանատար փաշային բացարձակապէս կը յայտարարէ թէ՝ այստեղի կեաւուրները պէտք է ջարդեն և ետքը երթան պատերազմի. սակայն փաշայի սպանական խօսքերուն առջև՝ տեղի կուտան: Մէկ քանիներ ալ մարթինին առնելով կը փախին լեռները՝ աւազակութեան. և այսօր այս պատճառով ճամբաներու վրայ ապահովութիւնը բոլորովին վերցած է:

Երբ թիւրք խուժանը բացէիքաց ջարդի սպանալիքներ կը թափէ խեղճ հայ ժողովուրդին գլխուն, աս ալ, ընդհակառակը, բոլորովին անտարբեր, մտքէն չ'անցնէր ինքնապաշտպանութեան միջոցներուն վրայ խորհիլ: Անհոգ և պաղարիւն՝ ձեռքերը ծալած կը նստի. թերևս, յիմարաբար, կը կարծէ թէ ինքը միայն զերծ պիտի մնայ սուլթանի գազանային բարբարոսութիւններէն. թափւած անմեղ արիւնը զինքը չի սարսափեցնէր, ոչ խարի պէս մորթւելէ ամենէին չի սոսկար, կարծես:

Առավարութեան և խուժանին այս ընթացքին հանդէպ մեր «աղաներուն» բռնած ուղղութիւնը կը սոսկացնէ մարդս: Ամէն ազնիւ զգացում՝ իրենց անձնական դժուր շահերուն գոհած, իրենց կեանքը ուրիշ հազարաւոր կեանքերէ շատ վեր դասելով, կը դիմեն այնպիսի դաւաճանութիւններու, որոնց նոյն իսկ կարելի չէ անձական մը տալ: Թող ուսմիկ ժողովուրդը մեռնի, թող կողոպտւի, թող փճանայ, կը համակերպին, բաւական է, որ իրենց կեանքերը ապահովութեան մէջ ըլլան: Եւ հիմա ալ ճիշտ այդ ուղղութեան հետեւելով, կ'առաջարկեն Աֆիօն-Գարահիսարի երիտասարդներուն, որ թիւրքին կամաւոր զինւոր դուրս: Ծայրայեղ նենգութեան, սարսափելի անամօթութեան և ահաբեկի ծառայամոլութեան խառնուրդէն գոյացած այս գաղափարը միայն կը պակսէր մեզ: Հայ կամաւորներ տալ թիւրք բանակին, Կրետական դատը ջախջախելու համար, որպէսզի կառավարութեան առջև իրենց պատիւը բարձրանայ և կարողանան 40-50 հոգիի անմեղ արիւնով իրենց խայտառակ կեանքերը գնել: Բայց մեր երիտասարդները շատ լաւ պատասխան մը կուտան այս միտքը յղացողներուն. «Մենք պատրաստ ենք երթալու, եթէ ձեր զաւակներէն մէկը և կամ ձեր մէջէն մէկը մեզի առաջնորդ ըլլայ» կամ «Եթէ դուք երթալ կ'ուզէք, գացէք, ասպարէզը բաց է, մենք չենք երթար»:

Ահա ճիւղաղներ, որոնք հակառակ այնչափ անգին զոհերու, հակառակ իրենց շուքը ինկած անձնէրներու

բանակին, տակաւին մազի մը չափ չեն հեռացած իրենց փտած գաղափարներէն: Չեն ուզեր համոզուիլ այդ հաղաները՝ թէ Յեղափոխութիւնը պիտի ազատէ զիրենք ու երկիրը այդ դժոխային վիճակէն. չեն փարիր այն սուրին, որ յեղափոխականը իրենց կը ներկայացնէ և կ'երթան կ'իյնան այն գազանին գիրկը, որ իր բոլոր ճիգերը կը թափէ չորցնելու հայ ազգին երակները և անոր երկաթէ ամուր ջիւղերը իր գազանական մեքենայութիւններուն մէջ պրկելով փճացնելու: Երբ Սասունի լեռներէն մինչ Սև և Միջերկրական վազած արիւնը «վրէժ» կը պոռայ, այդ գազանները կը յանդգնին նետուիլ մողոր սուլթանին վաւաշոտ գիրկը, անոր ամէն քմահաճոյքներուն գոհացում տալու և նոյն իսկ անոր սիրուն՝ ամէն սարսափելի դաւաճանութիւն կազմելու իրենց ազգակիցներուն և իրենց բախտակիցներուն դէմ: Ի՞նչ կ'ընէ Աֆիօն-Գարահիսարի ժողովուրդը իրերու այս վիճակին մէջ: Անցեալի արիւնոտ փորձառութիւնը տակաւին չէ արթնցուցած աֆիօն-գարահիսարցիներ: Օգնել իր յեղափոխական եղբօրը, որ զէնքը ձեռքը կ'իյնայ հայութեան դատը պաշտպանած միջոցին—մըտածել անգամ չի կրնար: Թիւրքերու սպառնալիքներուն առջև՝ ինքնապաշտպանութեան միջոցներու վրայ խորհիլ մտքէն անգամ չ'անցնիր: Վայ այդ ժողովուրդին, որ չի ճանչնար Յեղափոխութիւնը, որ չի գիտեր պատերազմի դաշտին վրայ ինկած հերոսներու յիշատակը յարգել և վաղն ալ դատապարտած է ոչխարի պէս մորթելու:

Աֆիօն-Գարահիսարցիներ լաւ համոզուելու է, թէ շատ համբերեց, շատ համակերպեցաւ և շատ տոկաց նախատիքներուն. իր բոլոր ազնիւ գաղափարները ոտքի կոխան եղան. բարոյապէս մեռաւ և մօտեցաւ իր նիւթական կործանումին:

Այսչափ արիւններէ ետքը մենք ալ չենք կրնար հաշտուիլ թիւրք կառավարութեան հետ. այն խրամատը, որ շատոնց պատուած է մեր միջև, այսօր լայնցած ու ահռելի անդունդ մը եղած է, որուն յատակը մահաւան սուերները կան. կամ մենք պիտի գլորինք այդ անդունդին մէջ կամ ան: Գոյութեան կռիւն է, որ կը մղենք այսօր: Ահա մեր բնաբանը՝ «կամ ան պէտք է ապրի, կամ մենք»: Բարոյական ուժը մեր կողմն է և մենք պիտի յաղթենք: Վայ այն հայուն, որ այդ կռիւն չի մասնակցիր, վայ անոր, որ նահատակող քաջերու յիշատակը յարգել չի գիտեր: Մեր թշնամին ոչ աղաչանքի, ոչ լաց ու կոծի առջև տեղի տաւ, բայց բռնադատուած տեղի պիտի տայ մեր սուրերուն առջև: Արիւնը և կրակը պիտի փրկեն մեզ, անոնք են մեր ազատարարները. դիմենք անոնց, անոնք պիտի առաջնորդեն մեզ ազատ աշխարհը:

Աֆիօն-Գարահիսարցիներ թող լաւ ճանչնայ այս ճշմարտութիւնը:

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Շ Ո Ւ Ր Զ Ը

Եթէ ապագային մէկը հարկ ըլլայ սուրբերուն կարգը դասել այդ իրաւունքը արեւելեան ինտրին կ'իյնայ. քանի որ ամենէն քաղաքաշարշար նահատուկն է: Բայց զգացումներու, կրօնի ու ազգային շահերու հակադարձ ըմբռնումով, որով դահիճները մեծ մարդասէսներ,

հայրենասէրներ են, հաւանական է, որ այդ սրբանալու երանութեանը ծարը և Աստուծոյ կայսրը արժանանան:

Ընկերային ու գաղափարական աշխարհին մէջ անդուլ ելելէն ետք կան. բարոյական այս վատթար շրջանն ալ կ'անցնի, աւելի բարձր իտէալով ու զգացումներով օժտուած օրեր կուգան, ուր փողոցներու մէջ պիտի տեսնուին կառապաններ, հասարակ գործաւորներ, մինչև իսկ աղքատներ, որոնք ցեղաբանօրէն պիտի հաստատեն, թէ իրենք թողնեն են Վիլհելմի, Յարի ու Ժօզէֆի, որոնք երբեմն ժողովուրդներու միամտութիւնը ու դիւրահաւատութիւնը կը շահագործէին: Բայց այդ դարուն աղքատները, բարոյապէս շատ բարձր պիտի ըլլայ այսօրուան թագաւորներէն:

Մենք պիտի չտեսնենք այն օրերը, ուր մանուկները իբր հեքիաթ իրարու պիտի պատմէին այսօրուան անցքերը, սապէս սկսելով՝ «Կար չկար, կայսր մը կար, այնքա՛ն չար, այնքա՛ն չար, որ...»: Բայց այդ դարուն սիրուն մանկիկները պիտի չկրնան ըմբռնել այդ չարութեան ոգին, որովհետեւ իրենց քոլորտիցը քարութիւն տեսած պիտի ըլլան միայն, ու մարդոց իրար ըզբտելը խիստ անքնական պիտի գտնեն: Եւ այս դարը պիտի հռչակուի այն քաղաքակիրթ դարը, ուր մարդկութիւնը ունեցած է ամենէն անարժան ու ամարդի բռնակալները:

Մանէ, թէկե՛ղ, փարէ՛ս, ահա այն խօսքերը, որ ամէն մարդ համարձակ կրնայ զարնել դարավերջիկ քաղաքականութեան մրոտ ծակտին:

Իրաւ է՝ թէ այս խորհրդածութիւնները չեն թնկեցներ մեր կակիծը, քանի որ դարուս շահամոլութեան պրկումներուն տակ խեղ-դամար կ'ըլլանք. պէտք է ծնինք նիւթական կոպիտ ուժին առջև ու այդ կոպիտ ուժին մարմնացումը եղող արեւելեան հարցին իւղովը մենք ալ տալուինք:

Օ՛հ, սա արեւելեան ինտրին, կարծես Աստուծոյ անէծքը կայ վրան, որ չի լուծւիր: Ամէն մարդ ժառանգորդ կը ներկայանայ անոր եւ իւրաքանչիւրը կը ծնի մեծակալ կտոր մը խաճնիկ անկէ, եթէ չը վախնայ, որ ոսկորը պուկը կը կայնի... Բանի որ իւրթ եղբայրներ են ժառանգորդները, արեւելեան ինտրին չի լուծւիր այլ... պիտի կտորի:

* *

Արեւելեան հարցը անարկու անորոշութեան մը մէջ հալած այն աղճամուշային հարցերէն է, որուն մէջ ամենայնադուզն նախադարձաբ, մէյ մը ինքնիրեն հարցնելու է՝ «ըլլա՛ն թէ չըլլա՛ն»: Ո՛վ կըրնայ ըսել, թէ այս բոլէիս հոն ապագայ մեծ տրամ մը շուրջադուր:

Եթէ մինչև օրս տեղի ունեցած մեղսակցութիւններէն ու դաւաճանութիւններէն դատենք, իրաւունք ունինք կարծելու, թէ տէրութիւններուն ընտանք քմահաճ ժամանցներ են ժամանակի անհունութեան մէջ...

Եւ կամ վայրենիներու իօլ պար մը մարդկային դիմանքու շուրջը...

1900-ին Փրանսու համաշխարհային ցուցահանդէսով մը քսաներորդ դարու քաղաքը պիտի կատարէ. ազգերը իրենց ծոխ ու շքեղ ցուցադրութիւններով—թէ եւ անոնք թշնամութեան արիւնքրոտիքի պըտուղն եղած ըլլան—սքանչացում պիտի պատճառեն: Այդ զմայելի ու շքեղազարդ պալատներուն կից, ուր քաղաքակրթութիւնը թեւ տուած կը յոխորտայ, կ'արժէ իցոյց դնել Հայաստանն ու Կրետէն, հարիւրհազարաւոր նահատակներու եւ ամայաւեր գիւղերու տեսարաններով... քանի որ անոնք ալ 19-դ դարու քաղաքակրթութիւնը կը ընտրեն: Իսկ անոնց քով, աւելի վեհութիւն մը տալու համար, կեցնել Յարի, Վիլհելմի ու Հանսթի իւրաքանչիւրը. աս ալ պիտի ներկայացնէ, քսաներորդ դարու սկիզբը, քաղաքակրթութեան միւս երեսը:

Աւելի իմաստասիրական ու արդար ըլլալու համար, այդ համաշխարհիկ հաստատութեան ծակատը կացնել սա խօսքը. Ա կ ե դ ա մ ա:

* *

Ակեղա՛մա (արեւան զին): Այս խօսքը պէտք է փակցնել նաեւ քոլոր արքունիքներուն ծակատը, իսկ մասնաւորապէս Վիլհելմի պնծէ գանկին վրայ, որուն ընտանիքը կը վայելէ այսօր արեւելքի

հարուստ աւարները ու կողողողութիւնը: Երբեք վիճակներ համար Ալի-
Պապայի քարայրն է, հերքէ է, որ ըսէ. «Բացւէ»:

Գերմանիան իր քաղաքներով ու Պիզմարքով սպառնալէն՝ քաղաքա-
կրթութեան ատենին առջեւ, սուլթանին փաստաբանի դերը
ստանձնած է, անոր հակառակորդներուն դէմ՝ ըստն արշաւանք մղե-
լով: Մեծ-Մարդասպանը, իր մեծ խորհրդակցին այդ վեհամեծ մար-
դավարութիւնը կրցաւ զնահատել, ինչպէս երախտագիտութեան, վեր-
ջերս յոյներէն զբաւած վեց թնդանօթ դրկեցով: Վիճակը, որ այս
պահուս իր պապերուն արժան կանգնելով զբաղած է, այդ վեց թնդ-
անօթներով ալ իր արժանը թափել պիտի տայ, թերեւս այն հա-
մոզմունքով, թէ Փղիասի հայրենիքէն եկած աւարով իտէալ ար-
ժաններ կարելի է շինել: Ժամանակով ամէն ծամբայ հոռո՛ կը
տանէր, այսօր ամէն զողօն Պերլինի ծամբայն կը բռնէ . . .

Իսկ Պիզմարքի օրկանը աղու կը թքնէ տէրութեանց երեսին,
որոնք Թիւրքիոյ բարենորոգումը կը պահանջեն: «Պէտք է ձգել, կ'ըսէ
այդ վայրերան օրկանը, որ Թիւրքիան ինքզինք բարենորոգէ. ուրիշ-
ները իրաւունք չունին խառնուելու եւայլն»: Ականջիս ալ անու
այլտեսակ վայրահալութիւններով: Հանգիստ եղիք ո՛վ երկաթի նա-
խարար, մի վրդովեք կէտն քի գգաւն քի. արիւնի ու սուրի
վարդապետութիւնը, որ քաղաքական սկզբունք ըրեր, բերաւ իր
պտուղները: Աչքդ բաց չես մեռնիր: Բայց կուգայ այն բարերար մըր-
բիկը, կ'աւել ամէն բան եւ դուն, քու միաստանիդ խորէն, լքած ու
հոգեւորանէ, կը տեսնես շատ բաներ, որոնք նախատեսւած չէին մա-
քիավելական իմաստասիրութեանդ մէջ: Ալ վախ չունիք, թէ զա-
ւարժութեանդ ընկեր երկու զամբոնները, կը յաջողին մաշեցնել ծե-
րութեանդ անիծակոտ շղթաները եւ դուն դուրս կուգաս ու կը
գործադրես նորէն սուրի ու արիւնի քաղաքականութիւնդ:

Միշտ եղար շարութեան առաքեալ եւ կը մաղթենք, որ վիճակը
միակն ըլլայ քեզի հետեւողներուն մէջ:

Հայաստանը աւերած ու Յունաստանը թշուառացած, սակայն մէ-
րութիւնները կը շարունակեն դեռ իրենց մեքենայութիւնները: Յու-
նա-թրքական խաղաղութեան համար դեպքանքներուն բանակցու-
թիւնները խուլ կոխներ են նաեւ իրարու մէջ: Մինչեւ իսկ կարծիք
կայ, թէ խաղաղութեան երկարաձգումը նուրբ պատճառներ ունի.
Թիւրքիոյ թիւատուր: Թէեւ Հանօթօ, Համիտի մեծ հիացողը, որուն
ըրաժնէրը պարտելու համար Ռեշիտի ծիրանին կը պակսի, կը
յայտարարէ՝ թէ Պոլսի բանակցութիւնները յաջողութեամբ պիտի
պսակին: Դիւանագիտական գաղտնիքները սպառնալ պատմութեան
մէջ միայն կը պարզին: Ինչ ալ ըլլայ, Թիւրքիոյ գոյի չգոյի հպրցը
դիւանագիտական արհեստագործին առջեւն է:

Թերեւս այդ անյոյս նախազգացումն էր, որ Համիտին ներշնչեց
ահագին տուգանք մը եւ Թեսալիան պահանջել Յունաստանէն: Թէ-
եւ պատերազմէն առաջ Մուրադիէվ կըսէր, թէ պատերազմողները
բան պիտի չշահին եւ սուլթանն ալ իր սովորական գլուխով
կ'արծազանգէր, թէ միայն Օսմանեան պատիւը փրկելու համար կը
պատերազմէր, բայց երբ յաղթութիւնը տարին թիւրքերը, խալի-
ֆան կ'ուզէ իր զանձին պատիւը ջրին երեսը հանել ու Թեսալիան
պահանջել: Սալթուրին վճարաւէս կ'ըսէր՝ «Թիւրքիոյ ձեռքէն ելած
հող մը ալ ետ չի դառնար». այսինքն կ'ուզէր հասկցնել թէ Թիւր-
քիան տեղատուիկ քաղաքականութեան մը միայն կրնայ հետեւիլ:

Դեսպանները որոշեցին Թեսալիան ետ տալ եւ Յունաստանի
եղեմտեց վիճակին համեմատ տուգանք մը որոշել. իսկ սահմանա-
գլխին վրայ պզտիկ փոփոխութիւն մը ընել ինչպէս Թիւրքիոյ:

Մարդկային տեսակէտով անհրաւ է տէրութեանց ըրածը: Սուլ-
թանը երբ նեղն է, մարդասիրութեան ու արդարութեան անուանով կը
բողոքէ, բայց այդ գազանը չի յեշեր, թէ իր զլխուն վրան ալ ար-
դարութեան բոցնդէն սուրը կը ծածի:

Թիւրք պաշտպանները ամբողջ Թեսալիան արտուկալ ընկէ,
եղած հունձքը փծացնելն ու քաղելն եւ ամէն վտուութիւն ընկէ՝ ետ-
քը, հազարաւոր ընտանիքներ յետին թշուառութեան մատնած պիտի
քաշին: Ահա դարուս քաղաքակրթութեան հրաշալիքները: Եւ սուլ-
թանը իր քաջարի վերնորդներուն արիւնք դնելով Եւրոպայի աշքին
առջեւ, կը գերեկնայ, որ իր յաղթութեան պտուղը չիւնն իրմէ:

Միւս կողմէն ալ չի մոռնար յիշեցնել Եւրոպայի «թիւրք խուժանին
մոլեռանդութիւնը»:

Օսմանեան բանակին այդ տղայական յաղթութեան վրայ, շնոր-
հի գերման սպաներու, իսլամական աշխարհը լայն շունչ մ'առաւ,
Պոլսի մէջ տաճիկ ամբոխը իր ոճրագործ գաւազներուն հերոսու-
թիւնները կը փառաբանէ: Աշխարհի մահմետականները, նոյն իսկ
անապատի անծածկոյթ տէրիշները, ոգեւորւած են Համիտի յաղ-
թութիւնով, այն իտէալով, թէ միսիլմանութիւնը քրիստոնէութեան
վրայ մեծ յաղթանակ տարած է:

Սուլթանը այս պահուս կ'ուզէ իրագործել համիսլամութեան այն
հսկայ երազը, որ իր տէրութիւնը քայքայեց: Համիտին մեծամոլու-
թիւնը արդարանալի է, որքան աստե՛ն . . . քարտէսներ ունի աշքին
առջեւ: Ի հարկէ այդքան հարէմներու մէջ պզտիկ երազները չեն
գոհացներ . . . Սակայն այդ տխուր հակասութիւններով մարդը՝ իր
հիմալայական անուրջներուն քով անդնդային զգայախարութիւններ
ալ ունի: Եւ այսօր իր յաղթանակի կատարէն, ճարպեան ժայռն ալ
մօտիկը կը տեսնէ . . .

Իսկ մենք, հայերս, դեռ կըստանանք մեր պահանջներու իրակա-
նացման: Սրածուլենէ յետոյ, սոքն է, որ կուգայ, մեր Մայր-Հայրե-
նիքի մէջ սուլթանի բարենորոգումը գործադրել: Եւսմեծ հրէշը կը
հրծել, որ բնութիւնը կը մեղսակցի իրեն, հայերու ընաշնման մէջ:
Կ'ըսեն թէ՝ պատրիարքին աշքին լուսերը թափեր են. ազգին դժ-
բախտութիւնը չտեսնելու, թէ՛ խալիֆային շնորհները վայելելու
համար . . .

Սպասէ, Մեծը Համիտ, սպասէ, ջուշանար այն երջանիկ օրը, ուր
ոչ ալլահը, ոչ սատանան, իրենց բոլոր լեզւանութիւնով, պիտի յա-
ջողին զապլ այն ահեղի թափը, որ իր արդարութեան թելերուն
տակ գերագոյն ժամը պիտի հնչեցնէ:

Ե՛րբ:--Ապագան ու յեղափոխութիւնը գիտեն միայն:

Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Խ Ն Դ Ի Ր Ը

Ինչպէս նախորդ անգամ յայտնած էինք, պ. Յարութիւն
Ճանկիւլեան իմբագրութեանս գիմեց, փափագելով ան-
ձամբ տեղեկանալ Միութեան խնդրի մասին Դաշնակցու-
թեան տրամադրութիւնն ու հայեացքները, եւ միջնորդ
հանդիսանալ Հնչակեան վերակազմնալ Վարչութեան ու
Դաշնակցութեան միջեւ:

Երեք օրեան միջոցին փոխանակած երկար բացատրու-
թիւնները լիովին բաւեցին համոզելու պ. Ճանկիւլեանը,
թէ Դաշնակցութիւնն արդէն իր օրակարգն անցուցած է
Միութեան խնդիրը եւ կ'իթէ ցարդ գանդագութիւն մը կ'ընդ-
նշմարել ասոր շուտափոյթ լուծումին մէջ՝ պատճառները
Դաշնակցութեան մէջ փնտռելու չէ:

Կային կարգ մը կարեւոր արգելքներ, որոնց բարձուր
միայն հնարաւոր պիտի կրնար ընել բանակցութիւններու
սկզբնաւորութիւն մը Հնչակեան վերակազմնալ Վարչու-
թեան եւ Դաշնակցութեան միջեւ:

Պ. Ճանկիւլեան հիմնաւոր գտնելով այդ մասնանիշ եղած
արգելքները, խոստացաւ գիմել ուր անկէ, օր առաջ գործ-
նական դետի մը վրայ դնելու խնդիրը:

Դաշնակցութեան կը մնայ ապասել այդ զխնդիրու
վախճանին՝ յուսալով թէ ամենուս փափագելի այդ խնդիրը
նպատարաւոր լուծում մը պիտի կրնայ ունենալ, կարելի
եղածին չափ մօտ ժամանակի մէջ:

Ա Պ Ս Տ Ա Մ Բ ՈՒ Թ Ի Ի Ն

ՕՏԻՐԻՆԻ (ԱՂԻՐԻԱՆՈՒՊՈԼՍԻ) ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՋ

Ստորինեան նահանգի պուլլարներու դատը պաշտպանող «Ստրանջա» յեղափոխական Ընկերութեան համանուն թերթէն կը քաղենք հետագայ ուրախաօրթ տեղեկութիւնները, որոնք տակաւին արձագանգ չեն գտած եւրոպական լրագրութեան մէջ:

Ապրիլ 26-ին (հ. տ.) Սարմաշի գիւղի մօտ յայտնեցան ապստամբներու խումբ մը՝ կազմած տեղացի դժգոհներէն: Խումբը կը դիմէ դէպի Փոքր-Թրնովա և հետզհետէ կը բազմանայ:

— Երկու խումբ, որ Լոզենկրատ կը դիմէին, ընդհանրում ունեցան թիւրք ոստիկաններու հետ. վերջիններս կորուստներ ունեցան:

Յոյները կը համակրեն շարժումին:

— Ապստամբները Փլաց գիւղին մօտ կռիւ ունեցան թիւրք ոստիկաններու հետ, որոնցմէ չորսը սպաննուեցան:

— Լոզենկրատի մօտ արիւնահեղ կռիւ տեղի ունեցաւ թիւրք զինուորներու և ապստամբներու միջև. ասոնցմէ չորս վիրաւոր և ութ հոգի գերի բռնուած:

Լուրեր կը պտտին ընդհանուր ապստամբութեան մասին: Օտրինի մէջ (Ա. Պոլիս) բազմաթիւ խուզարկութիւններ կատարուած են:

— Տեղացիներու ապստամբութիւնը սաստիկ կատրեցուցած է Օտրինի իշխանութիւնը: Խուզարկած են բոլոր յոյն ու պուլլար եկեղեցիներն ու դպրոցները: Արիֆ փաշան մայիս 12-ին Լոզենկրատ գնաց. 800 զինուոր Մուստաֆա փաշա հասան: Ահ ու սարսափ կը տիրէ ամէն աեղ. զօրքը կ'աւերէ, կը սպաննէ, կը բռնաբարէ:

— Արիֆ փաշան, իբրեւ զինուորական ընդհանուր նահանգապետ, իր վրայ առաւ ապստամբները նաւաճելու գործը: Ապստամբները զինաթափ ընելու համար, կռիւ տունն պուլլարներ կը քշեն զօրքի առջևէն:

— Արիֆ փաշան կը ջանայ գիւղացիները համոզել, որ չհետեին ապստամբներու օրինակին: Սուլթանի անունով կը խոստանայ բարենորոգումներ մտցնել:

— Կ'ըսեն թէ՝ ապստամբները աւերած են չորս թիւրք գիւղ, իրր վրէժ թիւրքերուն ձեռքով քրիստոնեաներու աղբիւրները թունաւորուած ըլլալուն:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի ՈՒ Թ Ի Ի Ն

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ մէջ ստացուած են.

Ժնե՝ Բ-ից 110 ֆր:

Ռ. քաղաքի մի խումբ հայ ուսանողներից 100 ուսւր. Ստարա-Ջազորա—Հրաբուխ 80 լև:

ՎԻՇԱՊ Կեդրոնական կոմիտէն ստացած է.

Ճ Մ. 15 դհ, Կապր 10 դհ, Սէր 10 դհ, Կախաղան 17 դհ, Մատթէոս 10 դհ, Արծիւ 5 դհ, Երեք բարեկամներ 120 դհ, Հեղինակ 10 դհ, Տ Բ. 20 դհ, Արէս 20 դհ, Վիրաւոր 5 դհ, Ս. Եղիա 10 դհ.

Նոյն կոմիտէն ստացած է.

Քարբերդէն՝ Ա. Տ. Ե. 47 դհ, Ա. Ս. 54 դհ, Յ. Ն. 54 դհ, Թ. Ս. 10 դհ, Միացեալ Հայք 40 դհ, Հ. Ե.

5 դհ, Գ. Ե. 5 դհ, Երկաթ 10 դհ, Հաց և Գինի 432 դհ: ՆԱԻԱՅԱՆԳԻՍՏԻ կոմիտէն ստացած է.

Ալիէից 1/2 անգ. ոսկի, 1 Ղազի ոսկի և 3 հինգ ղրուշնոց:

ՎԱՐՆԱՅԻ կոմիտէն ստացած է Հուլայի մասնաճիւղէն (մարտ ամսու մուտքը).

Վարազ խմբէն 7 ֆր, Ծագում խմբէն 10 ֆր, Հրացան խմբէն 14 ֆր 90 ս, Մասնաճիւղի անդամներէն 22 ֆր, Գանձանակէն 40 ֆր. 70 ս, Թ. Մ-էն նւէր 10 ֆր. 30 ս, Ս. Լ-էն 2 ֆր, Ա-էն 1 ֆր.

Հանգանակութենէ—Ոճ 20 լև, Ս. Լ. 5 լև Գ. Բ. 4 լև, Մ. Ղ. 5 լև, Մ. Վ. 2 լև, Վ. Տ. 1 լև, Խ. Ս. 4 լև, Թ. Տ. Բ. 2 լև, Ն. Բ. 1 լև 50 ս, Կ. Շ. 2 լև, Մժէժ 5 լև, Կ. Հ. 3 լև, Հայկ Արմէն 5 լև, Կայծակ 10 լև, Ճէլո 20 լև, Յարօ Թաթուլ 10 լև, Վահէ-Սիւնի 5 լև, Ուրական Մ. 11 լև.

ՍՕՖԻԱՅԻ կոմիտէն ստացած է 103 ֆր. 70 սանտ.

ՍԻՒՎԵՆԻ Օժանդակ կոմիտէն ստացած է.

Սթրալճա կայարանի հայ եղբայրներէն 10 լև 30 ս, Սարգիս Վարդանեան 1 լև, Բալուցի հայ եղբայրներէն 5 լև 50 ս, Վարդանեան Սարգիս 1 լև 60 ս:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ կոմիտէն ստացած է՝

Հայ երիտասարդութեան գանձանակէն 51 դհ, ևս 52 1/2 դհ, ևս 41 դհ, Արդարասէր խմբէն 10 դհ, Ա. Տ. Յար-էն 20 դհ.

ԳԱՅԻՐԵԻ կոմիտէն ստացած է.

Եգիպտացորեն 5 գաղ. ոսկի, Պետրոս Թաշճեան 5 անգլ. ոսկի, Գրիգոր Ասլանեան 263 ղրուշ 10 փր, Արաբա 20 ղրուշ, Մ. 20 ղրուշ, Սուրէնեանի խ-ի Զակարիկի ճիւղէն 20 ղրուշ, Նուարդ, Ապրիլ 15, Կայծակ, Բագարատ, Պերճ խումբ, Կամարական, Արմէն, Արմէն, Նահապետ, Գարեգին Մըհէր Մայրը, Դարեհ, Արամազդ, Յովհաննէս Պեղերճեան, Սարհատ, Բասկալ, Փայլակ, Մ. Արուս, Տիկին Նեվրիկ 10-ական ղրուշ, Կայծակ, Գառնիկ, Թոփուզ, Ա. Մ-ի ձեռքով, Պ. Շաւարշ, Ներսէհ, Ն. Յ., Մեղիք, Թոմա, Հայկազունի, Պ. Ռ., Պետիկ, Զուրիկ, Զօրեղ, Վարդգէս, Գրգռիչ, Գնթունի, Թորոս-Ռուբէն, Նուարդ, Նիքոլա Թուշուեան, Բարսեղ, Շմաւոն, Կայծակ, Տիգրան, Աւետիս, Խաչիկ Լազար, Հեթում 5-ական ղրուշ:

ՀԵՎՐԱՅԻ (Ամերիկա) կոմիտէն ստացած է ի նպաստ Հ. Ամերիկա խրկած դաշնակցականներու.

Պ. Մ. 3 շիլլինկ, Գ. Գ., Յ. Յ., Վ. Թ. 2-ական շիլլ. Ս. Ա., Ե. Գ., Ա. Գ., Ս. Գ., Ղ. Մ., Յ. Բ., Մ., Ա., Ա. Վ., Ն. Մ., Յ. Բ., Ս. Ա., Յ. Կ. 1-ական շիլլ. Խ. Տ., Մ. Յ., Կ. Ա., Տ. Շ., Վ. Մ., Ոճ, Մ. Ի. 50-ական սանտիմ:

ՍԻԼԻՍԻ (Ամերիկա) հանգանակած է ի նպաստ Ն. Ամերիկա խրկած դաշնակցականներու.

Ե. Խ., Ա. Օ., Յ. Ա., Ս. Տ., Կ. Ղ., Բ. Վ., Օ. Ն. 5-ական դոլլար, Յ. Թ. 3 դոլ. 50 ս, Ա. Շ., Ա. Ո, Յ. Ն., Կ. Խ, Մ. Ճ., Բ. Բ., Գ. Կ, Մ. Մ. 2-ական դոլ. Ս. Խ, Ա. Ն, Գ. Ա., Մ. Ս, Ա. Ա., Ս. Գ., Պ. Մ. Գ., Ե. Թ., Կ. Մ., Յ. Պ., Պ. Մ., Կ. Գ., Վ. Տ., Օ. Թ., Օ. Զ., Յ. Կ, Ա. Կ, Ա. Ղ. 1-ական դոլ. Յ. Կ, Ա. Պ., Գ. Պ, Յ. Պ, Ա. Խ, Կ. Ն, Տ. 50-ական սանտիմ, Ե. Օ, Յ. Ե., Կ. Խ. 25-ական սանտիմ:

Խմբագրութեանս գիմել հետեւեալ հասցեով՝

Rédaction du Droschak, Genève (Suisse)